

Աշխատուժի միջազգային միգրացիա. ռեցիպիենտ և դոնոր երկրների համար դրական և բացասական կողմերը

Շահինյան Անդրանիկ

Հանգուցային բառեր. *միջազգային միգրացիա, աշխատուժ, ռեցիպիենտ, անկանոն արտագաղթ, կանոնավոր արտագաղթ, կամավոր միգրանտներ, փախստականներ*

Հոդվածում աշխատուժի միջազգային միգրացիայի որոշ օրինաչափությունների հայեցակետերից (մասնավորապես ***ռեցիպիենտ*** և ***դոնոր*** երկրների ***դրական*** և ***բացասական*** կողմերով պայմանավորված) ուսումնասիրվել են ժամանակակից համաշխարհային տնտեսությանը բնորոշ հատկանիշներ. բնակչության լայնածավալ միգրացիա և, առաջին հերթին, աշխատանքային միգրացիա՝ մարդկանց շարժ՝ կապված բնակչության վայրի և աշխատանքի փոփոխության հետ: Ըստ արված վերլուծությունների՝ այն ձևավորում է նոր աշխատանքի շուկաներ և նոր ֆինանսական ու սոցիալ-տնտեսական հարաբերություններ: ***Կանոնավոր*** և, հիմնականում, ***անկանոն*** արտագաղթը այն կարևոր երևույթներից են, որը ազդում են երկրի տնտեսության բոլոր կողմերի վրա:

Աշխատանքային միգրացիան լուրջ ազդեցություն ունի երկրի տնտեսական զարգացման գործում, հատկապես մեծ է ազդեցությունը երկրի համախառն ներքին արդյունքի վրա: Աշխատանքային միգրացիան բացասական ազդեցություն է ունենում երկրի ներքին աշխատաշուկայի վրա՝ ստեղծելով աշխատաշուկայում առաջարկի և պահանջարկի անհամապատասխանություն: ՀՀ-ում աշխատանքային միգրացիան կանոնակարգվել էր երկրի կարևորագույն խնդիրներից է: Համընդհանրացման պայմաններում ավելի մեծ թվով երկրների սոցիալ-ժողովրդագրական և տնտեսական զարգացման կարևորագույն գործոններից կարելի է համարել բնակչության միջազգային միգրացիան, որը նպաստում է աշխատանքի ճկուն շուկայի ձևավորմանը, գիտատեխնիկական առաջընթացի նվաճումներին զարգացող երկրների հարմարեցմանը, աշխատանքային ռեսուրսների առավել ռացիոնալ օգտագործմանը, համաշխարհային քաղաքակրթությունների փոխազդեցությանը և փոխհարստացմանը: ***Աշխատանքի միջազգային շուկայի*** ձևավորումը վկայու-

թյունն է այն բանի, որ միասնացման գործընթացներն ընթանում են ոչ միայն տնտեսական և տեխնոլոգիական ոլորտներում, այլև ընդգրկում են սոցիալական և աշխատանքային հարաբերությունների անհամեմատ ավելի բարդ բնագավառներ:

Վերջին ժամանակներս **դոնոր** և **ռեցիպիենտ** երկրներում դիտվող միգրացիոն գործընթացների ակտիվացումը արտահայտվում է ինչպես **քանակական**, այնպես էլ **որակական** ցուցանիշների մեջ. փոխվում են աշխատուժի միգրացիայի հոսքերն ու դրանց ուղղությունները:

Բնակչության և աշխատուժի ներագգային և միջազգային մեծածավալ շարժը հանդիսանում է մարդկանց տնտեսական և սոցիալ-մշակութային կյանքի դրսևորումներից մեկը, ինչպես նաև առաջ է գալիս որպես միջպետական սրված հակամարտությունների, տարբեր երկրների ու ազգերի միջև տեղի ունեցող ուղղակի բախումների, արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանք: Դրանք կարող են լինել **և՛ կամավոր միգրանտներ**, որոնք օգտվում են համաշխարհային քաղաքակրթության և աշխատանքի միջազգային շուկաների կողմից իրենց ընձեռված իրավունքներից ու հնարավորություններից՝ ընտրելու իրենց բնակության և աշխատանքի վայրը, **և՛ փախստականներ** ու հարկադրված միգրանտներ, որոնք լքում են հայրենիքը ոչ թե իրենց կամքով, այլ ստեղծված «հանգամանքների» ճնշման տակ [1]:

Միջազգային հանրությունը, որը դեռևս ոչ վաղուց չէր տեսնում միգրացիոն պրոցեսների չափերը, յուրահատկություններն ու հետևանքները համաշխարհային մակարդակով, բախվեց միգրացիոն հոսքերի կարգավորման և սրված իրավիճակների լուծման համար շատ երկրների ուժերի կոորդինացման անհրաժեշտության հետ: Ստեղծված **կազմակերպա-ինստիտուցիոնալ, նորմատիվա-իրավական** և **ֆինանսական** կարգավորման մեխանիզմները թույլ են տալիս աստիճանաբար թոթափել ստեղծված լարվածությունը [3]:

Ժամանակակից բնակչության միջազգային շարժի մեջ հիմնական դերը պատկանում է աշխատուժի միգրացիային: Այս առումով երկրները կարելի է բաժանել երկու հիմնական խմբերի.

1. **Երկրներ, որոնցում գերակշռում է բնակչության էմիգրացիան, այսինքն՝ նրանք հանդիսանում են աշխատուժ մատակարարող երկրներ: Այս տեսակ երկրներին անվանում են նաև դոնոր երկրներ:**

2. **Բմիգրացիայի բարձր ցուցանիշներ ունեցող երկրներ՝ աշխատուժ ներկրող կամ այսպես կոչված ռեցիպիենտ երկրներ:**

Աշխատուժի *միջազգային (արտաքին)* միգրացիայի տակ հասկանում ենք աշխատանքային ռեսուրսների մեկնումը տվյալ երկրի սահմաններից դուրս՝ այլ երկրի գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելու նպատակով: Այն ներկայանում է աշխատանքային տարիքում գտնվող անձանց տեսքով, որոնք լքում են իրենց բնակության երկիրը ավելի բարձր վարձատրությամբ աշխատանք գտնելու նպատակով: Նրանք չեն խզում հայրենիքի հետ ունեցած կապերը, պարբերաբար դրամական փոխանցումներ են կատարում ընկերներին ու հարազատներին և պայմանագրի լրանալուն պես վերադառնում են: Այսինքն՝ աշխատուժի միգրացիան, որպես կանոն, վերջին հաշվով ենթադրում է վերադարձ մշտական բնակության վայրը [2]:

Աշխատուժի միջազգային միգրացիան միջազգային տնտեսական հարաբերությունների ամենաբարդ տարրերից մեկն է: Դա բացատրվում է նրանով, որ, ի տարբերություն ապրանքափոխանակության և կապիտալի միջազգային շարժի, այս գործընթացի մեջ ներգրավված են կենդանի մարդիկ: Այս պրոցեսի արդյունքում արտասահման է տեղափոխվում յուրահատուկ ապրանք՝ աշխատուժ: Աշխատուժը՝ որպես արտադրության կարևորագույն գործոն, փնտրում է իր առավել արդյունավետ օգտագործումը ոչ միայն ազգային, այլ նաև միջազգային տնտեսության շրջանակներում: Աշխատուժը հանդիսանում է արտադրության գործոն վերջիններիս համար և *հավելյալ արժեքի ստեղծող* [4]: Աշխատուժի միգրացիային չեն վերաբերում ծառայողական գործուղման շրջանակներում արտասահման մեկնող անձինք (արտերկրյա գործատուի հետ պայմանագրի բացակայության պայմաններում):

Միջազգային միգրանտները բաժանվում են հինգ հիմնական կատեգորիաների.

1. ***Իմիգրանտներ՝*** օրինական հիմքերով երկիր մուտք գործող անձինք: 80-90-ական թվականներին այս տեսակ իմիգրանտների թիվը կտրուկ աճեց, իսկ արդեն 2000-2021 թթ.-ին առավել շատացավ:

2. ***Պայմանագրով աշխատող միգրանտներ:*** 2000-ական թվականներին նրանց թիվը աշխարհում կազմում էր ավելի քան 37 մլն:

3. ***Անօրինական իմիգրանտներ:*** Նրանց թիվը 2000-ական թվականների վերջին հատում էր 40 մլն-ի սահմանը: Գրեթե բոլոր ինդուստրիալ երկրներում կան անօրինական իմիգրանտներ:

4. ***Ապաստան խնդրող անձինք:*** Մինչև 80-ական թվականները այս տեսակ միգրանտների թիվը խիստ աննշան էր, սակայն 90-ականների

վերջին նրանց թիվը կտրուկ աճեց և հասավ մինչև 1 մլն մարդու, իսկ 2000-ականներին հատեց միլիոնի սահմանը: Մարդիկ դիմում են ապաստան ստանալու համար հիմնականում քաղաքական դրդապատճառներով, ինչպես նաև իրենց երկրում ունեցած ծանր տնտեսական վիճակի հետևանքով:

5. **Փախստականներ:** ՄԱԿ-ի տվյալներով 90-ական թվականների վերջին աշխարհում հաշվվում էր ավելի քան 22 մլն փախստական: Ներկայումս փախստականների մեծամասնությունը ապրում է հատուկ ճամբարներում:

Աշխատուժի միջազգային միգրացիայի արդյունքում առաջանում է **աշխատանքի համաշխարհային շուկան:** Աշխատանքի համաշխարհային շուկան ընդգրկում է այն բոլոր աշխատանքային ռեսուրսների տարողոված հոսքերը, որոնք հատում են ազգային սահմանը: Աշխատանքի համաշխարհային շուկան միավորում է ազգային և տարածաշրջանային աշխատանքի շուկաները: Այն գործում է մյուս, ինչպես, օրինակ, ապրանքների և ծառայությունների, կապիտալի և տեղեկատվության համաշխարհային շուկաների կողքին [5]:

Վերջին ժամանակներս ավելացել են նաև անօրինական ներգաղթի ծավալները: **Չինացիները մեկնում են ԱՄՆ և Ռուսաստան, կուբացիները՝ Ֆլորիդա, այժիրցիները՝ Ֆրանսիա, պակիստանցիները՝ Անգլիա** և այլն: Այսպիսի անօրինական ներգաղթը հնարավորություն է տալիս ձեռներեցներին ամենացածր ծախսումներով ձեռք բերել անհրաժեշտ աշխատուժ և այդ կերպ ստանալ հսկայական շահույթներ:

Աշխատուժի միջազգային միգրացիան մշտապես բազմակողմանի դեր է խաղացել մարդկության զարգացման մեջ՝ նրա համար հանդես գալով որպես փոփոխվող պայմաններին հարմարվելու միջոց: Ներկայումս այն հասել է մեծ չափերի և աստիճանաբար դառնում է արդի սոցիալ-տնտեսական կյանքին բնորոշ երևույթ: Ամեն տարի եմիգրացիայի է դիմում 2-3 մլն մարդ: Համաշխարհային փորձը վկայում է, որ աշխատուժի միգրացիան անառարկելի առավելություններ է ընձեռում ինչպես այն **ընդունող**, այնպես էլ **մատակարարող** երկրներին [7]:

Պատճառները: Միգրացիայի պատճառները հիմնականում ծագում են երկրների միջև սոցիալ տնտեսական զարգացվածության և բնական աճի էական տարբերությունների արդյունքում: Իմիգրացիայի աշխարհագրական կենտրոններ են հանդիսանում առավել զարգացած երկրները,

ինչպիսիք են *ԱՄՆ-ն, Կանադան, Ավստրիան*, արևմտաեվրոպական երկրների մեծամասնությունը:

Տարբերում են աշխատուժի միջազգային միգրացիայի հինգ հիմնական ուղղություններ.

- 1. Միգրացիա՝ ուղղված զարգացող երկրներից զարգացած արդյունաբերական երկրներ:*
- 2. Չարգացած արդյունաբերական երկրների շրջանակներում տեղի ունեցող միգրացիա:*
- 3. Չարգացող երկրներով սահմանափակված միգրացիա:*
- 4. Նախկին խորհրդային երկրների բնակչության միգրացիան դեպի զարգացած արդյունաբերական երկրներ (սա նման է առաջին դեպքին):*
- 5. Գիտաշխատողների՝ որակյալ մասնագետների միգրացիա, որն ուղղված է զարգացած արդյունաբերական երկրներից դեպի զարգացող երկրներ:*

Աշխատուժի միջազգային միգրացիայի վերը նշված յուրաքանչյուր ուղղության մեջ ընդգրկված միգրացիոն ալիքները առաջանում են՝ հիմքում ունենալով տարբեր ու բազմաբնույթ պատճառներ: Չնայած որ վերջիններս բավական լավ ուսումնասիրված են, այնուամենայնիվ բնակչության և աշխատուժի տեղաշարժի դրդապատճառները միշտ չէ, որ պարզ են դառնում: Ի վերջո ինչն է ստիպում մարդկանց տեղափոխվել մի երկրից մյուսը [6]: Դրանք կարող են լինել.

- 1. Տնտեսական բնույթի պատճառներ, որոնց հիմքում ընկած են առանձին երկրների տնտեսական զարգացվածության մակարդակների էական տարբերությունները:*
- 2. Ոչ տնտեսական բնույթի պատճառներ, որոնց թվին են դասվում քաղաքական, ազգային, կրոնական, ռասսայական, ընտանեկան և այլ պատճառներ:*

Ռոպեա աշխատուժի միջազգային միգրացիան պայմանավորող էական տնտեսական գործոն, պետք է նշել նաև որոշ, հատկապես հետամնաց երկրներում առկա մասսայական գործազրկությունը:

Ավելացնենք նաև հետպատերազմյան շրջանում Եվրոպայում առաջ եկած մարդկանց կյանքի և գործունեության հետ կապված խնդիրները:

1. Առաջինը այսպես կոչված *«ուղեղների արտահոսքն»* է, այսինքն՝ բարձր որակավորում ունեցող մասնագետների և նրանց ընտանիքների հաստատուն հոսանքը դեպի Հյուսիսային Ամերիկա:

2. Երկրորդ խումբն ընդգրկում է Հունգարիայում 1956 թվականի հակախորհրդային ապստամբության պարտությունից, 1974-1975 թվականների վիետնամական պատերազմի ընթացքում «հարավցիների» նկատմամբ «հյուսիսցիների» տարած հաղթանակից հետո նշված երկրներից, ինչպես նաև 1980 թվականին Կուբայից փախստականների հոսքերը:

3. Երրորդ ալիքը հիմնականում բաղկացած է Մեքսիկայից, Կարիբյան ավազանի երկրներից և Ասիայից դեպի ԱՄՆ ուղղված աշխատուժի արտահոսքից: 90-ական թվականներին բոլոր իմիգրանտների 84 % ը ժամանել էին այս շրջաններից:

Եթե նշված առաջին երկու դեպքերում միգրացիա առաջանում է հիմնականում քաղաքական ենթատեքստով, ապա երրորդում դրանք կրում են զուտ տնտեսական բնույթ: Այսպես, օրինակ, Մեքսիկայից վերաբնակվել ցանկացողների թիվը ճիշտ համապատասխանում է տվյալ ժամանակաշրջանի ընթացքում ԱՄՆ-ում 4 դոլար/ժամ վարձատրությամբ լրացուցիչ աշխատողների նկատմամբ ունեցած պահանջարկին:

Աշխատուժի միջազգային շարժի գործընթացների մեջ յուրահատուկ տեղ է գրավում 19-20-րդ դարերին Չինաստանից դեպի Հարավարևելյան Ասիայի և Հյուսիսային Ամերիկայի երկրներ ուղղված միգրացիան: Այն հանդես է գալիս հիմնականում նշված երկրներում մշտական բնակություն հաստատողների տեսքով և գնահատվում է 70 ից մինչև 100 մլն մարդ:

2-րդ աշխարհամարտի ավարտից հետո (հատկապես 60-ական թվականների սկզբից) Եվրոպայում նույնպես դիտվում է աշխատուժի միգրացիայի ինտենսիվացում: Իսպանիայի, Պորտուգալիայի, Հունաստանի, Հարավսլավիայի աշխատուժը օգտագործվում է Եվրոպայի զարգացած արդյունաբերական երկրների տնտեսություններում:

Զարգացած արդյունաբերական երկրներում ընթացող աշխատուժի միգրացիան ավելի շուտ կապված է ոչ թե տնտեսական, այլ ոչ տնտեսական գործոնների հետ: Միևնույն ժամանակ այս երկրներին նույնպես խորթ չէ «ուղեղների արտահոսքը»:

«Խարտիայի» մեջ շարադրվում է, որ ընդհանուր տնտեսական միջավայրի կառուցումը ամրապնդվում է սոցիալական ապահովվածության միջոցով:

Որոշ սոցիոլոգների կարծիքով ԵՄ-ի ներսում «Խարտիայի» կիրառումը կարող է հանգեցնել նրան, որ բարձր որակավորում ունեցող մաս-

նագետները կենտրոնանան առավել զարգացած շրջաններում:

Միգրացիան, որն ուղղված է զարգացած արդյունաբերական երկրներից դեպի զարգացող երկրներ, հիմնականում իրենից ներկայացնում է **Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի** երկրներից զարգացող երկրներ ուղղված որակավորված կադրերի համեմատաբար ոչ մեծ միգրացիոն հոսքերը: Սրա հիմքում ընկած են ինչպես տնտեսական, այնպես էլ կենցաղային բնույթի պատճառներ:

Հատկապես մեծ ուշադրության է արժանի նախկին սոցիալիստական, ինչպես նաև ԱՊՀ երկրներում ընթացող միգրացիան: Իր ժամանակին ԽՍՀՄ-ը աշխատուժ էր ներկրում Բուլղարիայից, Վիետնամից, Հյուսիսային Կորեայից: Ռուսական պետության առաջացումից հետո դրանց թվին ավելացավ նաև Չինաստանը: Ներկայումս, պաշտոնական տվյալներով, Ռուսաստանում աշխատում է 40 հազ. չինացի: Միգրացիոն հոսքերը ուղղված են հատկապես դեպի մայրաքաղաք: Մոսկվայում աշխատում են աշխարհի 78 երկրներից եկած աշխատողներ ու մասնագետներ: ***Բմիգրանտները կազմում են Մոսկովյան շինարարների 46 %-ը, քաղաքային տրանսպորտի աշխատակիցների 34 %-ը:***

Այս ամենի հետ պետք է նշել նաև, որ հատկապես նպատակահարմար է սահմանամերձ և հարևան երկրների աշխատուժի օգտագործումը: Դրա առավելությունը այն է, որ աշխատուժի առաքման ժամանակ տրանսպորտային ծախսերը հասցվում են նվազագույնի, ինչպես նաև այն, որ **ճոճանակային միգրացիայի** դեպքում տեղավորման և վերաբնակեցման հետ կապված առանձնապես մեծ ծախսեր չեն պահանջվում [7]:

Աշխատուժի միջազգային միգրացիան **ռեցիպիենտ** և **դոնոր** երկրների տնտեսական ու սոցիալական զարգացման վրա ունենում է դրական և բացասական ազդեցություն: Ռեցիպիենտ երկրների համար դրական կողմերը հետևյալն են.

1. Այդ երկրները միգրանտների հաշվին ունենում են ավելի էժան աշխատուժ, որը տեղական ֆիրմաներին հնարավորություն է տալիս կրճատել ծախսերը և համաշխարհային շուկայում բարձրացնել իրենց արտադրած ապրանքների մրցակցությունը: Միգրանտների աշխատանքի ցածր վարձատրությունը մի կողմից բարձրացնում է տվյալ ֆիրմայի շահույթի նորման, մյուս կողմից էժան աշխատուժի առկայությունը ճնշում է գործադրում երկրի աշխատավարձի ընդհանուր մակարդակի վրա:

2. Ընդունող երկիրը ստանում է պատրաստի աշխատուժ՝ ավելի քիչ

ծախսեր կատարելով միգրանտների կրթության և նրանց մասնագիտական որակավորման բարձրացման համար: Միգրանտներն իրենց հետ բերում են նոր գաղափարներ, մասնագիտական ունակություններ և փորձ, դրանք ներդնում են արտադրության մեջ և առաջընթաց են մտցնում առանձին ճյուղերի զարգացման գործում:

3. Միգրանտներն ընդլայնում են ներքին սպառողական շուկան, քանի որ նրանք իրենց հերթին ներկայացնում են ապրանքների և ծառայությունների լրացուցիչ պահանջարկ, որն էլ խթանում է արտադրության աճը և ստեղծում լրացուցիչ զբաղվածություն:

4. Միգրանտների բանկային հաշիվներում կուտակված միջոցներն օգտագործվում են տվյալ երկրի տնտեսության զարգացման համար:

5. Միգրանտների վճարած հարկերի հաշվին ավելանում են ռեցիպիենտ երկրի պետական բյուջեյի եկամուտները:

6. Միգրանտները ավելացնում են տվյալ երկրի աշխատուժի առաջարկը, որի հետևանքով աճում է այդ երկրում արտադրվող ազգային եկամուտը: Վերջինիս աճի այդ մասն անվանում են **իմիգրացիոն ավելցուկ**, որի մեծությունը կախման մեջ է իմիգրանտների որակական կազմից:

7. Աշխատուժի՝ որպես տնտեսական ռեսուրսի ներմուծումը մեծացնում է ռեցիպիենտ երկրի արտադրական ներուժը և արտադրական հնարավորությունների կորը տեղափոխում է դեպի աջ:

Ռեցիպիենտ երկրի համար աշխատուժի ներմուծումն ունի նաև բացասական հետևանքներ.

- Ռեցիպիենտ երկրում հաճախ ծագում են սոցիալական լարվածություն և ազգամիջյան թշնամանք:
- Տեղական բնակչության և իմիգրանտների միջև հաճախակի առաջացող տարաձայնությունները հասցնում են տարբեր աստիճանի բախումների, որոնց հետևանքներն անկանխատեսելի են:
- Միգրանտների մեծ հոսքերը բարձրացնում են գործազրկության մակարդակը և բացասական ազդեցություն ունենում զարգացած երկրների աշխատավորների տնտեսական դրության վրա:
- Միգրանտները հայրենիք վերադառնալիս իրենց հետ տանում են ձեռք բերած արտադրական փորձը և կապիտալը:

Ղոնոր երկրների վրա աշխատանքի միջազգային միգրացիայի ունեցած դրական հետևանքներն են.

1. Աշխատունակ բնակչության մի մասի արտագաղթը ինչ-որ

չափով բարելավում է դոնոր երկրի աշխատուժի շուկան, կրճատում գործազրկությունը, մասնակիքեն թեթևացնում է զբաղվածության սուր հիմնախնդիրը, թուլացնում տվյալ երկրի սոցիալական լարվածությունը, կրճատում պետության կողմից կատարվող սոցիալական ծախսերը:

2. Աշխատող միգրանտները զգալի դրամական միջոցներ են փոխանցում հայրենիք՝ իրենց հարազատներին: Այդ միջոցների հաշվին բարձրանում է բնակչության եկամուտների մակարդակը և դրական ազդեցություն ունենում երկրի ֆինանսական վիճակի բարելավման վրա:

Աշխատուժի միգրացիայի առավել ***բացասական կողմերն են.***

- Երկիրը կորցնում է ակտիվ տարիքում գտնվող աշխատանքային ռեսուրսների մի մասը, փոխում է բնակչության ժողովրդագրական կազմը և այլն:
- Երկիրը կորցնում է այն միջոցները, որոնք ծախսվել են աշխատունակ մարդկանց կրթության և մասնագիտական որակավորման բարձրացման վրա:
- Մեծանում է երկրի աշխատավորների հարկային բեռը, քանի որ նրանք ստիպված են վճարել ավելի շատ հարկեր՝ ապահովելու համար պետության բոլոր տեսակի ծախսերի ֆինանսավորումը:

Հետազոտված ժամանակահատվածում (2020-2022 թթ.), ըստ ՄԱԿ-ի սահմանած մեթոդաբանության, միջազգային միգրանտները կազմել են երկրից 3 ամիս և ավելի ժամկետով բացակա տ/տ (տնային տնտեսություններ) անդամների (չվերադարձածների) շուրջ 84 %-ը (մոտ 85 000 հազ. մարդ), որոնցից կարճաժամկետ միգրանտները՝ 3-12 ամիս տևողությամբ երկրից բացակայածները (ներառված չեն՝ հանգստի, ընկերներին/բարեկամներին այցելության, արձակուրդի, գործնական, բուժման մեկնածները) կազմել են 68 %, իսկ երկարաժամկետ միգրանտները՝ մեկ տարի և ավելի ժամկետով բացակայողները, կազմել են 32 %: Հետազոտության արդյունքներով արձանագրվել է, որ 2020-2022 թթ. միջակայքում 3 ամիս և ավելի տևողությամբ ՀՀ-ից մեկնած և 2022 թ.-ի դրությամբ դեռևս չվերադարձած տ/տ միգրանտ անդամների գնահատված միջին տարեկան թվաքանակը կազմել է շուրջ 16 հազ. մարդ:

Հետազոտության արդյունքներով արձանագրվել է նաև, որ տ/տ անդամների շուրջ 3.7 %-ը մտադրություն է ունեցել մոտակա 12 ամիսների ընթացքում մեկնել այլ երկիր, 0.5 %-ը՝ ք.Երևան կամ ՀՀ այլ մարզ, իսկ 95.8 %-ը նման մտադրություն չի ունեցել:

ՀՀ բնակչության միջպետական տեղաշարժերի վարչական գրանցումներն ըստ երկրների, 2020-2022թթ., %
 Distribution of interstate movements registered in the administrative records by countries, 2020-2022, %

	Հաշվառված/Registered		
	2020	2021	2022
Ռուսաստան/Russia	25.0	26.2	19.5
Վրաստան/Georgia	16.3	14.2	18.1
Իրան/Iran	6.2	6.2	13.6
Սիրիա/Syria	16.3	16.2	11.0
Լիբանան/ Lebanon	4.6	5.1	7.9
ԱՄՆ/USA	10.2	10.4	11.6
Ուկրաինա/Ukraine	4.3	4.6	0.1
Ղազախստան/Kazakhstan	1.5	1.1	1.8
Ֆրանսիա/Franse	7.4	7.6	8.0
Հունաստան/Gteece	1.0	1.1	0.7
Գերմանիա/Germany	2.0	1.3	0.7
Բելառուս/Belarus	0.5	0.4	0.5
Ուզբեկստան/Uzbekistan	0.5	0.2	0.5
Այլ /Other	5.2	5.4	6.0
Ընդամենը/Total	100	100	100

Աղյուսակ II

	Հաշվառումից հանված/Deregistered		
	2020	2021	2022
Ռուսաստան/Russia	25.8	28.9	30.7
Վրաստան/Georgia	7.7	9.3	9.9
Իրան/Iran	4.4	4.6	2.7
Սիրիա/Syria	0.4	1.0	1.5
Լիբանան/ Lebanon	0.1	1.1	1.3
ԱՄՆ/USA	15.2	13.3	12.5
Ուկրաինա/Ukraine	4.1	4.2	0.4
Ղազախստան/Kazakhstan	4.4	5.3	4.0
Ֆրանսիա/Franse	12.8	9.2	12.4
Հունաստան/Gteece	3.0	2.5	3.4
Գերմանիա/Germany	6.2	5.8	7.0
Բելառուս/Belarus	2.3	1.2	1.0
Ուզբեկստան/Uzbekistan	0.1	0.3	0.2
Այլ/Other	13.5	12.3	13.0
Ընդամենը/Total	100	100	100

Այսպիսով, հողվածի շրջանակներում գրականության վերլուծությունը և ուսումնասիրությունները մեզ բերեցին այն համոզման, որ **աշխատուժի միջազգային միգրացիան** արտահանող և ներմուծող երկրների վրա ունենում է **դրական** և **բացասական** հետևանքներ: Սոցիալական ոլորտի մասնագետների մեծամասնությունն այն կարծիքին է, որ **դոնոր երկրները** կորցնում են ավելի շատ, քան ձեռք են բերում աշխատուժի արտահանումից, իսկ **ռեցիպենտ երկրները**, ընդհակառակը, ավելի շատ շահում են, քան կորցնում: Մակայն որքան էլ մեծ լինի միգրանտների մուտքի կամ ելքի երկրների զանգվածային տեղաշարժը, և՛ ռեցիպիենտ, և՛ դոնոր երկրներում առաջանում են տարբեր խնդիրներ, որոնց լուծումը պարտադիր ենթադրում է աշխատուժի միջազգային միգրացիայի պետական, միջպետական, տարածաշրջանային և միջազգային կարգավորում:

Գրականություն

1. Աթոյան Կ. , Բնակչության միգրացիայի կարգավորման արդի գերակայությունները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, Տնտեսագետ հր. , 2015. 304 էջ:
2. Մարգարյան Ն. , Մարկոսյան Ն. , Խաչատրյան Ն. , Միգրացիայի դիպկերը և մարդկային կապիտալի վերարտադրությունը. հարցադրումներ, հարցումներ, համադրումներ, Երևան, ԵՊՀ հր. , 2016, 140 էջ:
3. Մանուկյան Ս. , Միգրացիայի կառավարման գործոնները Հայաստանում, Երևան, «Այ Փի Էս Մի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի հր. , 2013, 33 էջ:
4. Մանուկյան Ս. , Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի հետազոտություն, Երևան, «Այ Փի Էս Մի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի հր. , 2016, 175 էջ:
5. Հարությունյան Լ. , Հայկական միգրացիայի նոր վայրիվերումները. ամբողջական պատճառները և հնարավոր հետևանքները, Հայ սոցիոլոգիական մտքի անթոլոգիա, ԵՊՀ հր. , Կազմող խմբ.՝ Մկրտչյան Ա. Ե. , Վերմիշյան Հ. Ռ. , Երևան, 2018, էջ 395-396:
6. Տատունց Ս. , Իմիգրացիոն գործոնները գյուրալացվող աշխարհում. հիմնախնդիրներ և միտումներ, Հայ սոցիոլոգիական մտքի անթոլոգիա, ԵՊՀ հր. , Կազմող խմբ.՝ Մկրտչյան Ա. Ե. , Վերմիշյան Հ. Ռ. , Երևան, 2018, էջ 346-349:
7. Алексеенкова Е., ЕАЭС к 2025 г.: приоритеты и ожидания государственных. Перспективы развития проекта ЕАЭС к 2025 году. Рабочая тетрадь. Спецвыпуск. 2017; Российский совет по международным делам (РСМД). 2017, М.: НП РСМД, 92 с.

**Международная трудовая миграция.
Положительные и отрицательные стороны
для стран-реципиентов и доноров**

Шагинян Андраник

Резюме

***Ключевые слова:** международная миграция, трудовая сила, получатель, незаконная эмиграция, регулярная эмиграция, добровольные мигранты, беженцы*

В статье рассматриваются характерные особенности современной мировой экономики с точки зрения некоторых моделей международной трудовой миграции (в частности, в связи с положительными и отрицательными сторонами стран-реципиентов и стран-доноров): масштабная миграция населения, и прежде всего трудовая миграция - перемещение людей, связанное с местом жительства и сменой работы. Согласно выявленным анализам, это создает новые рынки труда, новые финансовые и социально-экономические отношения. И регулярная, и чаще всего нелегальная эмиграция является одним из важных явлений, который воздействует на все части страны.

Трудовая миграция оказывает значительное влияние на экономическое развитие страны, особенно на валовой внутренний продукт страны. Трудовая миграция оказывает негативное влияние на внутренний рынок труда страны, создавая несоответствие между спросом и предложением на рынке труда. Регулирование трудовой миграции в Армении является одним из важнейших вопросов в стране. Одним из важнейших факторов социально-демографического и экономического развития большого количества стран является международная миграция населения, которая способствует формированию гибкого рынка труда, адаптации развивающихся стран к научно-техническому прогрессу, более рациональное использование трудовых ресурсов, взаимодействие мировых цивилизаций. Возникновение международного рынка труда свидетельствует о том, что интеграционные процессы происходят не только в экономической и технологической сферах, но и в несравненно более сложных сферах социально-трудовых отношений.

International Labor Migration. Positive and Negative Sides for Recipient and Donor Countries

Shahinyan Andranik

Summary

Key words: *international migration, labor force, interpreter, irregular emigration, regular emigration, voluntary migrants, refugees*

The article examines the features of the modern world economy (particularly due to the positive and negative aspects of recipient donor countries) from the perspective of international labor migration, large-scale migration of the population and, above all, labor migration, movement of people with a change in place and work.

According to the analysis, it forms new labor markets, new financial and socio-economic relations. Both regular and mainly irregular emigration is one of the important phenomena affecting all sides of the country.

Labor migration has a significant impact on the economic development of the country, especially on the gross domestic product of the country. Labor migration has a negative impact on the domestic labor market of the country, creating a mismatch between supply and demand in the labor market. The regulation of labor migration in Armenia is one of the most important issues in the country. One of the most important factors of socio-demographic and economic development of a large number of countries is the international migration of the population, which contributes to the formation of a flexible labor market, adaptation of developing countries to scientific and technological progress, more rational use of labor resources, interaction of world civilizations.

The emergence of the international labor market indicates that integration processes occur not only in the economic and technological spheres, but also in incomparably more complex spheres of social and labor relations.

Ներկայացվել է 01.06.2022 թ.

Գրախոսվել է 31.08.2022 թ.

Ընդունվել է սպագրության 25.11.2022 թ.